չան ոչ մի խօսք չասեց և չը շնորհաւորելով հիւպատոսին, իսկոյն տուն գնաց: Ռուսաց հիւպատոսի վարմունքը, որ մտադրութեամբ արված է համարվում, մեծ յուզմունք զարթեցրեց բօլղարական շրջաններում:

—Հռոմէական ‹Observatore Romano› լրագիրը դեկտեմբերի 13-ից հաղորդում է հետևեալը: Երէկ պապը, ամենահին ժամանակներից մնացած սովորութեամբ, ընդունում էր կարդինալներին, որոնք եկել էին Ծնունդը և Նոր տարին պապին շնորհաւորելու համար: Որպէս պատասխան նրան արած բարեմաղթութիւններին, սրբազան հայրը ասաց, որ նրա դրութիւնը շատ անտանելի է դառնում: Հռոմէական եկեղեցու գլխի անկախութիւնը և նրա հոգևոր իշխանութիւնը ապահովելու միակ միջոցն է վերականգնել աշխարհային իշխանութիւնը, որը տասը դարերից աւելի գոյութիւն ունէր: Այդ պատճառով շատ հասկանալի է, որ եպիսկոպոսներից նրանք, որոնք Հռոմումն են գտնւում, հրաւէրք ստացան իրանց կարծիքը յայտնել գործերի դրութեան մասին:

—‹Հավասի ընկերութիւնը› հետևեալ հեռագիր ստացաւ Կ. Պօլսից, դեկտեմբերի 14-ից. Լուր է տարածվել, թէ Բ. Դուռը գլխաւորութիւն ունի երեք մինիստրութիւնների,—հասարակական աշխատանքների, առևտրի և ֆինանսների պորտֆէլները, առաջարկել երեք գերմանացիներին: Վէտտէնդորֆ կընդունի ֆինանսների մինիստրութիւնը: Թիւրքաց կառավարութիւնը ցանկանում է նոյնպէս նահանգապետների մօտ մուստեշարներ կամ խորհրդականներ գերմանացիներին նշանակել: Ալի-Նիզամ-փաշան, ասում են, արդէն բանակցում է զանազան անձանց հետ Բերլինում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բերլինի ‹Tagblatt› լրագիրը պատմում է, որ իւրաքանչիւր օր տեղական կաթնավաճառը կաթ է հասցնում բնակիչներին, ի միջի այլոց և Ս. կալուածից: Նորերումս առաւօտեան կաթ բերող կառապանը գալիս է իր մուշտարիների մօտ առանց կաթի և իրան արդարացնելու համար ասում է հետևեալը. Երէկ կէսօրին մեր հարիւրից աւելի կովերը բոլորը հարբեցին: Ահա թէ ինչպէս: Կովերի խմելու ամանների մէջ, սխալմամբ ջրի տեղ 150 լիտրի չափ սպիրտ են ածել: Այդ հրեղէն հեղուկը ինչպէս երևում է, կովերին դուր է եկել և կարճ ժամանակում նրանք այնպիսի դրութեան են հասել, որ ոչ մէկը չէ համարձակվել մօտենալ նրանց, և այդպիսով նրանց չը կթեցին: Կառապանը յայտնեց, որ երևի միայն այսօր երեկոյեան արբեցողները ուշքի կը գան:

⁂

Դանիէլ Կայ պատմում է չինացի մէկ երեխայի զարմանալի ընդունակութեան մասին: Նորերումս մէկ ուսումնարանում քննութեամբ ներկայ գտնվելով, նա տեսաւ, թէ ինչպէս մէկ երեխայ առանց կանգնելու ամբողջ Նոր-Կտակարանը անգիր ասեց:

⁂

Ամերիկայի Մասաչուզէտ նահանգում մի քանի ժամանակից մէկ լրագիր է հրատարակվում, որը, ինչպէս ինքն խմբագրութիւնը հաղորդում է իր ստորագրական րէկլամի մէջ, կարող է ստորագրողներին ծառայել որպէս անուշահոտութիւն տարածող թուղթ: Նրա բովանդակութիւնը, հոտի հետ միասին, որ իմացվում է այրելու ժամանակ, անդադար կը փոփոխվեն ամենաախորժելի կերպով:

⁂

Կանադայի նահանգապետ լորդ Լօրն նորերումս նախագահում էր Լօնդօնեան կանանց գաղթականութեան համար կազմված ընկերութեան միտինգին: Նա յայտնեց, որ Կանադան, մանաւանդ նրա արևելեան մասը, խոստացեալ երկիր է անպսակ աղջկանց համար: Այդ նահանգի քաղաքներում դժուար են աղախիններ գտնում, բայց նորահարսերի պահանջը աւելի ևս մեծ է: Բաւական է, որ մէկ քիչ թէ շատ գեղեցիկ աղջիկ ափ իջնի,—մի քանի օրից յետոյ նա արդէն ամուսին կը գտնի: Հեռու արևելեան ծայրերում մինչև անգամ պատերազմում են նորահարսերի համար: Մօնրէալում, Կվէբէկում և Տօրօնտօում տանտիկինները գանգատվում են, որ չէ կարելի մի քիչ գեղեցիկ աղախին վարձել. երկու շաբաթից յետոյ յայտնվում է մէկ սիրահարված երիտասարդ, և աղախինը մարդու է գնում Որովհետև, ստատիստիկական տեղեկութիւնների համեմատ, Անգլիայում կանայքը մէկ ամբողջ միլիօնով տղամարդկերից աւելի են, այն ժամանակ, ի հարկէ, այդ աւելցածը գաղթելով, երկու երկիրների համար ևս օգտաւէտ կը լինէր:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 դեկտեմբերի: „Прав. Вѣстн.“ լրագրի հաղորդութիւնը հերքում է լուրերը պօլիցէյական մինիստրութեան կազմվելու մասին: Լրագիրները դեկտեմբերի 23-ից հաղորդում են, որ Ռուսաստանի հարաւում մի ընկերութիւն է կազմակերպվում Քութայիսի նահանգի քարածուխի հանքերի արդիւնաշահութեան համար:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ՆՈՐ ՏԱՐԻՆ ամենաէժան գներով. կօնեակ, վիսկի, պօրտվէյն, խերես, շամպայն, մուրաբաներ, սօուս, պիկուլի, րակ, սեմգա, կօնֆեկտներ, ապակէ ամաններ, բրիտանական մետալից առարկաներ, սապօն, չուլկի, գուլպաններ, հագուստներ, վարտիկներ, ֆուֆայկա, ալբօմներ: Պանիր չեստեր 80 կ. ֆունտը, արմատներ պլում-պուդինգի համար 40 կ., արծաթէ մոմեր 35—42 կ. անգլիական ֆունտը, մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական երկաթէ մահճակալներ $30^0/_0$ էժան քան թէ մի ուրիշ տեղ, այսինքն երեխաների 4 ռուբլուց և մեծերինը 12 ռուբլուց: 50,000 ֆունտ թէյ 1 ռուբլուց և ամենալաւը 2 ր. ֆունտը: Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**:

3—7

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բօկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 կ. հատը, 10,000 ասեղ 8—40 կ. հարիւրը, 10,000 պնակներ 5 կ., 5,000 շիշ պօրտ-վէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլեօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 դիւժին մատիտներ և գրչակոթեր 8 կ. դիւժինը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէօշկա 50 կ. ֆունտը, 600 անգլիական րէվօլվերներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, տրիկօ, ալբօմներ, ձմեռվայ պալտօներ, գլխարկներ, վարտիկներ, հագուստներ գնով: Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ: Նոյն տեղը ծախվում է ծովային **ԽՈՏ** պուդը 2 ր. 50 կ.:

29—60

Մամուլի տակ է և շուտով լոյս կը տեսնի „ՀԱՅ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ“ առաջին հատորը (ա. գրքոյկ), որ բովանդակում է իւր մէջ միայն հէքիաթներ, ժողոված Երևանեան նահանգում և գրած բուն տեղական բարբառով:

Այս ա. գրքոյկի անմիջապէս լոյս տեսնելուց յետոյ, մամուլի տակ կը մտնի նորա բ. գրքոյկը: Իսկ երբ կը վերջացնենք մեր ունեցած հէքիաթների տպագրութիւնը, այնուհետև ձեռնամուխ կը լինենք ժողովրդական աւանդութեանց միւս տեսակների հրատարակութեան—ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ, ԱՌԱԾՆԵՐԻ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐԻ, ԱՆԷԾՔՆԵՐԻ, ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ և այլն (որոնցից մեծ քանակութեամբ ունենք ժողոված) լոյս ածելով նոյնպէս առանձին գրքոյկներով:

Յուսով եմ, որ մեր պատուելի օտարաքաղաքացի համազգայինք չեն զլանայ իւրեանց կարեաց չափ աջակից լինելու ինձ այս ձեռնարկութեան մէջ:

Բաւականաչափ նիւթ ուղարկողները, որպէս այս հրատարակութեան աշխատակիցներ՝ այսուհետև տպագրուելի բոլոր գրքոյկներից մի մի օրինակ ձրի կը ստանան. բացի այս՝ նոցա ազգ-անունները կը տպագրուեն գրքոյկի վերջը: Իսկ այն պարոնները, որոնք այս աւանդութիւններից նոյնպէս մեծ քանակութեամբ ժողոված ունեն և կը ցանկանան իրանց ժողովածուն վաճառել՝ թո՛ղ բարեհաճեն յայտնել իրանց պայմանները:

Նիւթերը հարկաւոր է գրել (գրածը խնդրում ենք մաքուր լինի և որոշ) բուն տեղական բարբառով. դնելով ժողովածուի վերջը տեղական դժուարիմաց բառերի բացատրութիւնները:

Իմ հասցէն՝ Вагаршапатъ. *Тиграну Навасартянцъ.* Տ. Նաւասարդեանց.

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

122—150

Վերահանգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող: Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏԱՅՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԽԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը, վրձին գլխացաւի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՈՆ** և հոտաւէտ ջրեր և այլն

60—100

ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐՔԵՐ

Որոնք վաճառվում են ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

1	Բագրատունի՝ Տասն պատգամք. գինն է	25 կ.
2	Աղայեանց՝ Անահիտ, հին զրոյց.	50 „
3	Թզուկ, Թարգ. Տէր-Միքայելեանցի.	30 „
4	Աղքատ մանուկ կամ բարոյական վէպ.	20 „
5	Խաթաբալա Սունդուկեանցի.	50 „
6	Ջօրս մանրավէպ Տէր-Աւետիսեանի.	20 „
7	Հայերէն լօտօ երեխաների համար.	50 „
8	Տէր-Ակոբեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն..	60 „
9	Կոստանեանց՝ Գրաբառ բայերի խոնարհումը.	25 „
10	Թագւորեան՝ փոքր լեզուագիտական հետազօտութեան. . . .	50 „

Եւս ստացուել է Բոստոմի Տէր-Աբրահամեանցի 1882 թուի **ՕՐԱՑՈՅՑ**, գինն է 15 կոպ. գումարով առնողներին զիջումն կը լինի:

„ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ“ ԲՈՒԽԳԱԼՏԵՐԻԱՅ“

Ամենանոր և գործնական ձևի, բացարձակ կանոններով և բացատրութեամբ, որ ամենահեշտ կերպով կարող է սովորացնել հաշուապահութիւնը այն անձանց, որոնք ցանկանում են սովորել կամ ունենալ այդպիսի հաշիւներ, շուտով կը մտնի մամուլի տակ. գիրքը կը բաղկանայ մօտ 400 երեսից. և մաքուր տպագրութեամբ. դորա հետ միասին կը լինի և մի փոքրիկ վիպասանութիւն „Գող“ վերնագրով և „Իմ երգերը“ յաւելուածով. ցանկացողները Թիֆլիսում կարող են գրուել „Կենտրոնական“ և „Զաքարիայ Գրիգորեանցի գրավաճառանոցներում և Թադէոս Տէր-Միքայէլեանցի մօտ. Բագու Բասիյսկիյ մագազինում, ինձ մօտ և „Մարդընկ“ գրադարանում. գաւառական քաղաքներում այն անձանց մօտ, որոնք բարեհաճել են այդ մասին ստորագրութեան թերթ ընդունել:

Երկուսի արժէքն է միասին 2 ր. 50 կ. տպագրութիւնից յետոյ 3 ր.: Բաժանորդների անունները և ազգանունները կը տպագրուեն գրքի վերջում:

Հրատարակիչ Աբէլ Դ. Ապրեսեանց

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներկայ տարուայ հոկտեմբերի 1-ից բանալով ԵՐԵՒԱՆՈՒՄ գրավաճառանոց, նոյնպէս և ուսումնարանական, նկարչական և կազմարարական պիտոյից իրեղէնների խանութ, հրաւիրում եմ գրական աշխատանքների հեղինակներին, թարգմանիչներին, հրատարակիչներին և լրագրական խմբագիրներին (թէ հայ և թէ ռուս լեզուներով) ուղարկել ինձ վաճառելու իրենց աշխատութիւնները ԿՈՄԻՍԻԱՅՈՎ: Իմ հասցէն. г. Эривань, Нерсесу Симеонянцу, магазинъ „Другъ Дѣтей.“ 9—10

Ջայի և գինու ստաքաններ

[illegible]

144 Արծրունու քարվանսարա 144
ամենաէժան պահեստ
Մեբէլի և հայելիների.

[illegible]

Ծախվում են մեծ և փոքր քանակութեամբ:

Дозволено цензурою, Тифлисъ 24 Декабря 1881 года. Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.